


ՅԱՒԵԼՈՒԱԾ ՄԱՍԻՍԼՐԱԳՐՈՅ ՓԱՐԻՋԻ ԱՄՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԼՈՒՅՈՎՐԱՅԻ Յ. ՀԵՐԱՐԵԱՆ

ՀԻՆԳՇԱՐԹԻ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ ՎԵՐՋԻՆԱԼՈՒՐՆԵՐ

Դուրս 28 սեպտեմբերի
Հոս հասած Պաշտոնական օրագրի-
րը Պ. Ժիւլ Ֆալիւրի տեղեկագիրը կը
կը հրատարակէ ֆերրիէրի մէջ ըրած
տեսակցութեան վրայ: Տեղեկագիրը
Ժիւլ Ֆալիւրի եւ Պիամարքի մէջ եղած
խօսակցութիւնը բովանդակելով այս-
պէս կ'երկարացնէ: «Ես խաղաղու-
թիւն փնտռեցի եւ պատերազմի ու
երկրակալութեան անընկճելի կամը մը
եղաւ դէմս: Այս իրողութիւնները կը
հաւաստեմ, Եւրոպայի կը ծանուցա-
նեմ, եւ համոզուած եմ որ Գաղղիա
զայրացած՝ մեղի հետ կը մերժէ նուա-
տացողիչ պայմանները: Դժ պաշտօն
անօգուտ չեղաւ. բոլոր երկրորդութիւն-
ները՝ որոյ ներքեւ կը ծածկուէր Բը-
րուսիա՝ անհետ եղան: Յայտարարու-
թիւն ըրեր էր թէ իր պատերազմը
Նաբոլէոնի հետ էր եւ ազգը պիտի
յարգէր: Տիմա գիտենք ուղիւսը:

«Երկրը պիտի ոտք ելնէ՝ կա՛մ
մեզ սուտ հանելու կա՛մ մինչեւ վերջը
գիւմարելու համար: Մեր անյողգող-
հաստատամտութիւնէն կախեալ է ար-
դարութեան եւ ազատութեան յաղ-
թութիւնը:»

Պատերազմի պաշտօնէին սեպտեմ-
բերի 24 իրիկուան հասած տեղեկագիրը քա-
նի մը յաջող կռիւներ կը ծանուցանէ:
Կարծ խօսելով վիճակը լաւ է:

Եւրեմ 27 սեպտեմբեր
Փարիզէն սեպտեմբեր 25 թուով եկած
մասնաւոր լուրեր կըսեն թէ գերի
բռնուած Բրուսիացի զօրականներու
վրայ դառնուած նամակներ կը հաւաս-
տեն թէ թշնամեաց զինուորները վը-
հատած են. որովհետեւ կը յուսային
որ փարիզ չպիտի գիւմանար:

Օրէնքան 27 սեպտեմբեր
Գաղղիացի զօրականներն այսօր

Օրէնքան պարպեցին թշնամեաց մե-
ծադոյն զօրութեանց առջեւ:

Լոնտրա 27 սեպտեմբեր, իրիկուն.
Փարիզէն եկած լուրերը՝ Գաղղիացի-
ւոց ձեռք բերած մանր մունր յաղ-
թութիւններ կը ծանուցանեն:

Պէրլին 28 սեպտեմբեր
Փարիզի չըջակայներէն Լոնտրա
հասած լուրերը կը ծանուցանեն թէ
Փարիզի մէջ շարժուն պահապան զին-
ւորները 2000 5000 կը փախին եւ ի-
րենց տունը կերթան. թէ նոյն զին-
ւորներէն 2000 չափ ալ ստահակու-
թեան պատճառաւ հրացանի բռնուե-
ր են, եւ թէ չըջակայ գիւղերուն բնա-
կիւնները գաղղիական զօրքերէն վը-
ռնուողներով իրենց տեղերը կը դառ-
նան իրենց գոյքերով:

Հեռագիր թաղաւորին առ թա-
ղաւորին

Ֆերրիէր 27 սեպտեմբեր, իրիկուն.
—Սթրասպուրկ անձնատուր եղաւ այ-
սօր իրիկուան ժամ ցին:

Տարվթատ 27 սեպտեմբեր
Լուտիլիսհաֆէնէն լուր կուտան
թէ Սթրասպուրկ անձնատուր եղեր
է այս իրիկուն ժամ հինգին:

Միւնխէլէ 28 սեպտեմբեր
Բրուսիական հեռագիր պաշտօնա-
կանս —Սթրասպուրկի անձնատուր-
թիւնն այս առաւօտ ժամ երկուքին
կնքուեցաւ Լէսինսքի տեղակալ գըն-
դապետին ձեռքը: 451 պաշտօնակալ
եւ 17000 մարդ, ազգային պահապան
զինուորներով հանդերձ, զէնքերնին
վար դրին. ժամ ութին դռները մեր
զօրաց պիտի յանձնուին:

Գաղղիական Օրինին Նախօճալ
լրագիրն հետեւեալ հաշիւը կը հըրա-
տարակէ:

337000 ՄԱՐԴ 1,250000 ԴԷՄ
«Գաղղիոյ արտաքին գործոց պաշ-

տօնատան մէջ պահուած վաւերական
գրութիւններէ կը հասկցուի թէ եր-
բոր Պ. Տը Կրամօն Օրէնագիր Ժողովին
մէջ արտասանեց այն սպառնալից յայ-
տարարութիւնը՝ որ պատերազմին պատ-
ճառ եղաւ, Գերմանիոյ մէջ դառնող
Գաղղիական դեսպաններէն մանրամա-
սըն վիճակացոյցներ ստացեր էր Բրու-
սիոյ մեր դէմ հանելիք զօրութեանց
վրայ, որ պահանջի կերպով կազմուած,
երկարատեւէն ի վեր պատրաստուած,
նշանի կ'սպասէին պատերազմի քաղ-
լու:

«Այն զօրութիւնները՝ 1,124,000
հետեւեալ եւ 130,000 ձիաւոր կը ներ-
կայացնէին, այն է 1,200,000էն աւե-
ր զօրք եւ ահեղ թնդանօթներ:

«Նոյն միջոցին Գաղղիոյ մէջ ընդ-
հանուր քուէարկութիւնը կատարուե-
լով, համայն Գաղղիոյ եւ ճէզայիլի
մէջ դառնուած զօրաց քուէները 337,000
էն աւելի չէին:

«Ուրեմն կայսրութեան պաշտօն-
եայները՝ եւ նոյն ինքն Նաբոլէոն Գ.
քաջ գիտնալով որ մէկ միլիոն երկու
հարիւր հազար գերմանացի դէմ
երեք հարիւր երսուն ու եօթն հա-
զար զօրքէն աւելի չունէին հանելիք,
պատերազմ հրատարակեցին եւ Գաղ-
ղիա այս արկունուշտ եւ ամօթալի
արկածին մէջ ձգեցին:

«Եւ ինդրեւնք որ հասարակապե-
տական կառավարութիւնն այս թիւն-
ըն ստուգելով, եւ եթէ պէտք կայ
ուղղելով, Գաղղիոյ ամեն քաղաքնե-
րուն ու գիւղերուն մէջ հրատարակէ:

Լոնտրա 27 սեպտեմբեր
Անգլ. Գօնս. դոց 92
Օսմ. Գօնս. բաց. 42 յ 8
» » դոց. 42 յ 8—1 յ 8
» Նոր փոխ. 54
Պանթա » 41 յ 2—44 յ 1
Ա.ժիօ Վիէնայի 123,23

ԳԻՆ 20 ՓԱՐՍ